

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱՆՔ**

Մայիսի 31-ին Գեղարքունիքի մարզպետարանում անցկացվեց հրամանատարա-
շտաբային ուսումնավարժանք՝ ‘Արտակարգ իրավիճակներում կենդանիների
վարակիչ մակաբուծային եւ ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը եւ
վերացմանը ուղղված միջոցառումներ’ թեմայով: Ուսումնավարժանքը վարում էր
Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Մարզպետունի Մանուկյանը:
Ուսումնավարժանքին մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարության,
Գեղարքունիքի մարզպետարանի եւ Գեղարքունիքի մարզի փրկարար ծառայության
ներկայացուցիչներ, մարզի համայնքների ղեկավարներ:
Միջոցառման ընթացքում գյուղնախարարության ներկայացուցիչը առաջ քաշեց մի
շարք հարցեր, որով ստուգվեց նաև թե Գեղարքունիքի մարզի համայնքների
անասնաբույժները ու համայնքների ներկայացուցիչներն ինչքանով են
պատրաստված՝ միջոցներ ձեռնարկելու կենդանիների շրջանում ի հայտ եկած
հիվանդությունների վտանգը նվազեցնելու ուղղությամբ: Բերվեցին մի շարք
օրինակներ սիբիրյան խոցի, թոչնագրիպի արագ հայտնաբերման եւ անհրաժեշտ
միջոցառումների իրականացման, սատկած կենդանիների թաղման եւ
անասնագերեզմանոցների մեկուսացման վերաբերյալ: Անասնահամաճարակների եւ
նրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին մարզի բնակչության
շրջանում բավարար իրազեկում կազմակերպելու համար մասնակիցների կողմից
առաջ քաշվեց հատուկ գրքույկներ տպագրելու եւ մարդկանց անվճար բաժանելու
անհրաժեշտությունը: